



ՎԱՐՍԻԿ ՏԻՊՐԱՆՅԱՆ

ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի ասիստենտ,
տնտեսագիտության թեկնածու

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ-ում զբոսաշրջության ոլորտի զարգացման կարևոր խնդիրներից է դրա ձևերի բազմազանեցումը: Արդյունքները փաստում են, որ, օգտագործելով ՀՀ զբոսաշրջային ներուժը և զարգացնելով միջազգային շուկայում մեծ պահանջարկ վայելող նոր ուղղությունները, հնարավոր է ծնավորել բազմազանեցված զբոսաշրջային փաթեթ, որը երկարաժամկետ հեռանկարում հնարավորություն կընձեռի երկրում արձանագրել ներգնա զբոսաշրջության աճ: Միաժամանակ, դրանով կապահովվեն զբոսաշրջության արտադրական, եկամտի ստեղծման, զբաղվածության ապահովման, ներդրումային, վճարային հաշվեկշիռի բարելավման տնտեսական գործառույթները:

Հիմնաբառեր. զարգացող երկրներ, բնական և մարդածին ռեսուրսներ, զբոսաշրջության ներդրում, ճամփորդական հեղաշրջում, զբոսաշրջային ուղղություններ, զբոսաշրջային արժեքներ, ագրոզբոսաշրջություն, էկոզբոսաշրջություն, հյուրատներ, տարածքային զարգացում, նպատակային քաղաքականություն

JEL: L8, L83, L88

Այսօր համաշխարհային տնտեսությունն արագորեն ենթարկվում է ընդգրկուն վերափոխումների, որտեղ յուրաքանչյուր երկիր և՛ տնտեսական, և՛ աշխարհաքաղաքական առումով ձգտում է ապահովել իր կայուն տեղն ու դերը: Նոր տնտեսական միջավայրում հատկապես կարևորվում է զարգացող երկրների դերը, որոնք ունեն բնական և մարդածին ռեսուրսների հսկայական պաշարներ: Այդ ռեսուրսների ինդուստրացման, առևտրայնացման համար անհրաժեշտ են նոր գաղափարներ, որոնց ձևավորմանը կարող են նպաստել կառավարման համակարգում հարուստ տնտեսական և իրավական փորձ ունեցող զարգացած երկրները:

Հայաստանը համաշխարհային տնտեսությունում միջինից ցածր եկամուտ ունեցող, ցամաքով շրջափակված, դեպի ծովային տարածքներ անմիջական ելք չունեցող 32 զարգացող երկրներից մեկն է¹: 2015 թ. մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն ՀՀ-ում կազմել է 3504.0 ԱՄՆ դոլար²:

Ընդհանուր առմամբ, ցամաքով շրջափակված և ծովային տարածքներ անմիջական ելք չունեցող զարգացող երկրներում բարձր է աղքատության մակարդակը՝ պայմանավորված տնտեսական աճի ցածր տեմպերով³: Ուստի Միացյալ ազգերի կազմակերպությունը այս երկրների առանձնահատուկ խնդիրները լուծելու համար նախաձեռնել է առաջնային գործողություններ, որոնք, մասնավորապես, վերաբերում են ենթակառուցվածքների զարգացմանը և այնպիսի քաղաքականության իրականացմանը, որը կնվազեցնի տարանցման չափազանց մեծ ծախսերը և այդ երկրներին կտրամադրի համաշխարհային առևտրին լիարժեքորեն մասնակցելու հնարավորություն⁴:

Հետձգնաժամային ժամանակակից պայմանները պարտադրում են ՀՀ տնտեսական զարգացման քաղաքականությունն ուղղել երկրի բնական և մարդածին ռեսուրսների գնահատմանն ու արդյունավետ կառավարմանը՝ տեխնոլոգիական նոր կիրառումներով, արտաքին ցնցումներին դիմակայելու ունակ տնտեսական և քաղաքական ժամանակակից ու մրցունակ միջավայրի ձևավորմանը, մարդկային կապիտալի շարունակական զարգացման վրա հիմնված տնտեսական աճի ապահովմանը:

ՀՀ ՀՆԱ ճյուղային կառուցվածքում, ըստ «Հայաստանի հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի (ՀՁԾ)», տնտեսական աճի շարժիչ ուժ է համարվում տնտեսության արտահանելի հատվածը, հիմնականում՝ արդյունաբերության շնորհիվ, ինչպես նաև ծառայությունների ոլորտը՝ որպես տնտեսական ակտիվությանը սպասարկող ճյուղ: Համաշխարհային տնտեսությունում երկրների զարգացման փորձը ցույց է տալիս, որ դեպի կապիտալի և գիտական ներուժի վրա հիմնված ճյուղեր անցմանը նպաստում են նախ՝ ներմուծման փոխարինիչների արտադրության զարգացումը, ապա արտահանման աճը՝ ի հաշիվ աշխատատար ճյուղերի, հետագայում՝ աշխատատար ճյուղերից դեպի կապիտալատար ճյուղեր անցումը: Տնտեսության վերափոխման վերջին փուլը կապիտալատար ճյուղերից դեպի բարձր տեխնոլոգիաների անցման կամ գիտատար ճյուղերի վրա հիմնված տնտեսության զարգացումն է⁵:

ՀՀ-ում նշված գործընթացների հաջողությանը կարող է նպաստել դինամիկ զարգացող զբոսաշրջությունը և այս ոլորտում իրականացվող պետական քաղաքականությունը, որի նպատակն է զբոսաշրջային այցելությունների քանակական և որակական աճի ապահովման միջոցով մեծացնել այս բնագա-

¹ Տե՛ս <http://unohrills.org/meetings-conferences-and-special-events/landlocked-developing-countries-facts-and-figures-unctad-2006/>

² Տե՛ս <http://www.mfe.am/>, ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ (Եռամսյակային): Ցուցանիշը հաշվարկվում է ՀՀ մշտական բնակչության միջին տարեկան թվի հիման վրա:

³ Միացյալ ազգերի կազմակերպությունը տարածաշրջանում ՀՀ-ին և Ադրբեջանին դասել է ցամաքով շրջափակված, ծովային տարածքներ անմիջական ելք չունեցող զարգացող երկրների շարքը, որոնցում տնտեսական աճը 2015 թ. կազմել է համապատասխանաբար՝ 2.5 և 4.0%, <http://www.ereport.ru/stat.php.razdel=country&count>.

⁴ Տե՛ս <http://www.ildc2conference.org/custom-content/uploads/2014/09/Report-en.pdf>.

⁵ Տե՛ս <http://www.gov.am/files/docs/1322.pdf>. Հայաստանի Հանրապետության 2014–2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, էջ 1–30:

վառի ներդրումը ազգային եկամտի ավելացման, տարածքային համաչափ զարգացման, բնակչության կենսամակարդակի բարձրացման և աղքատության նվազեցման գործում և միջազգային զբոսաշրջային շուկային առաջարկել բազմաբնույթ, մրցունակ զբոսաշրջային արդյունք և բարձրակարգ ծառայություններ:

Մարդկության օր օրի աճող տարաբնույթ պահանջմունքները և դրանց բավարարման հնարավորությունների անդադար փնտրտույքը, գիտատեխնիկական առաջընթացը, կյանքի որակի բարելավումը, «արձակուրդ» և «ազատ ժամանակ» հասկացությունների բովանդակության լիարժեք ընկալումը հանգեցրել են համաշխարհային մասշտաբով զբոսաշրջության նոր տեսակների առաջացմանը:

Վերջին տասնամյակում զբոսաշրջությունը դարձել է ապրելակերպ, առաջընթացի գործիք, փորձի, նոր գիտելիքների ձեռքբերման ցանկություն և հնարավորություն, որով էլ պայմանավորված՝ զբոսաշրջության դասական մոդելն առաջատարի իր դիրքը զիջել է այնպիսի ժամանակակից բազմաբովանդակ մոդելների, ինչպիսիք են ռեկրեացիոն, սպառողական, սպորտային, առողջարանային, կրոնական, գործնական, էկոլոգիական, արկածային, գյուղական, կարոտախտային, գնումների, լուսանկարչական զբոսաշրջության տեսակները⁶: Այս ոլորտի մասնագետները զբոսաշրջության բուռն զարգացումն այսօր համարում են ճամփորդական հեղաշրջում՝ տեխնոլոգիական հեղաշրջումից հետո⁷:

Զբոսաշրջային բոլոր ձևերն էլ ուսուցողական բնույթ ունեն, դրանք փոխում են մարդկանց մտածողությունը, նրանց դարձնում ավելի շփվող, որի համար էլ ծախսվում են հսկայական գումարներ: Ուստի զբոսաշրջության ձևերի բազմազանեցումը շատ երկրների, ինչպես նաև ՀՀ-ի համար կենսական նշանակություն ունի և կարող է դառնալ կայուն եկամտի աղբյուր:

Ներկայացնելով զբոսաշրջության վերը նշված տեսակները՝ փորձենք բացահայտել ՀՀ-ում զարգացման ներուժ ունեցող նոր ուղղությունների կազմակերպման հնարավորությունը և դրանք դիտարկել որպես ամբողջական պահանջարկի բարձրացման խթան, քանի որ ամբողջական պահանջարկը վերջնական ապրանքների և ծառայությունների գումարային ծավալն է, այսինքն՝ ազգային արտադրության իրական ծավալը, որը տնային տնտեսությունները, ձեռնարկությունները, պետությունը և արտասահմանցիները պատրաստ են գնել՝ գների ցանկացած հնարավոր մակարդակի դեպքում: Ներքին և արտաքին պահանջարկներից կազմված ամբողջական պահանջարկը պատկերացում է տալիս տնտեսությունում ստեղծված եկամուտների ծախսման ուղղությունների վերաբերյալ՝ ներառելով սպառողական, ներդրումային

⁶ 1970-ականներին արդեն աշխարհում լայն տարածում էր ստացել զբոսաշրջության դասական ձևը՝ հատկապես դեպի հարուստ պատմություն ունեցող և զարգացած ենթակառուցվածքներով օժտված Եվրոպա, երբ զբոսաշրջիկը էքսկուրսիաների միջոցով այցելում էր տվյալ երկրի տեսարժան վայրեր, ծանոթանում պատմամշակութային արժեքներին, ավանդույթներին, ընդլայնում իր մտահորիզոնը՝ ներդրում կատարելով սեփական մտավոր կապիտալում:

⁷ Տե՛ս <http://www.azatutyun.am/a/24743828.html>.

«Զբոսաշրջությունը նույնիսկ ավելի շահավետ արդյունաբերություն է, քան արդյունաբերության ճյուղերից շատերը, որոնք հիմնված են չվերականգնվող ռեսուրսների վրա: Զվերականգնվող ասելով նկատի ունենք արդյունաբերության այնպիսի ճյուղեր, ինչպիսիք են նավթարդյունաբերությունը, հանքարդյունաբերությունը», - նշել է Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության գլխավոր քարտուղար Թալեթ Ռիֆայը: Տե՛ս ՄԱԿ-ի զբոսաշրջային համաշխարհային կազմակերպության միջազգային համաժողով: Եր., հոկտեմբերի 18, 2012 թ.:

ծախսերը, պետական գնումները, զուտ արտահանումը (հայրենական ապրանքների նկատմամբ արտասահմանցիների պահանջարկի և արտասահմանյան ապրանքների նկատմամբ ներքին պահանջարկի տարբերությունները)⁸:

Այսպիսով՝ զբոսաշրջության տեսակների ժամանակակից դասակարգման հիմքում հիմնականում զբոսաշրջության նպատակն է⁹:

Աշխարհում զբոսաշրջության ամենատարածված տեսակը ռեկրեացիոնն է, որը ենթադրում է հանգիստ՝ լողափին կամ բնության գրկում. հարակից տեսարժան վայրեր այցելություններով և իրավիճակի կամ մթնոլորտի փոփոխության շնորհիվ վերականգնվում է զբոսաշրջիկի ֆիզիկական ու հոգեհուզական վիճակը, հարմար է ճանապարհորդների գրեթե բոլոր խմբերի համար:

Սպառողական զբոսաշրջությունը ենթադրում է անմիջական շփում բնության հետ, որի նպատակը բնական ռեսուրսների հայթայթումն է՝ որսորդություն, ձկնորսություն, դեղաբույսերի հավաքում: Դրան բնորոշ է սեզոնայնությունը, տվյալ երկրի բնապահպանական օրենքների խստությունը, իսկ ժամանակակից աշխարհում ենթադրում է նաև ճամփորդություն՝ սպառողական ապրանքներ ձեռք բերելու համար:

Ներկայում բոլոր տարիքային խմբերի զբոսաշրջիկների շրջանում մեծ ճանաչում ունի սպորտային զբոսաշրջությունը: Ակտիվ հանգիստը նախընտրողները կարող են անմիջական մասնակցություն ունենալ սպորտային տարբեր միջոցառումների, իսկ պասիվ հանգստի կողմնակիցները հնարավորություն ունեն որպես հանդիսատես ներկա գտնվելու սպորտային մեծածավալ մրցույթների և առաջնությունների: Որևէ երկրում այս տեսակը զարգացնելու համար անհրաժեշտ են համապատասխան ենթակառուցվածքներ՝ արագընթաց ավտոճանապարհներ, մարզադաշտեր, լեռնադահուկային և հեծանվասպորտի ճանապարհներ, լողավազաններ, ծիարչավարաններ, գոլֆի, թենիսի դաշտեր և այլն:

Ուսումնասիրությունները փաստում են, որ վերջին տարիներին աշխարհում մեծացել է առողջարանային զբոսաշրջության հանդեպ հետաքրքրությունը, ինչը զգալի հեռանկարներ է բացում նաև ՀՀ-ի համար՝ հաշվի առնելով և՛ ավանդույթները, և՛ առողջարանային բնական գոտիների առկայությունը՝ Ջերմուկ, Արզնի, Աղվերան:

Ճանապարհորդության ավանդական և հնագույն ձևերից է կրոնական զբոսաշրջությունը, որն արդիական է նաև այսօր: Միլիոնավոր զբոսաշրջիկներ ամեն տարի այցելում են համաշխարհային կրոնների կենտրոններ, դարերի պատմություն ունեցող սրբավայրեր, հոգևոր և կրթական օջախներ: Նման վայրերը շատ են Իսրայելում, Սաուդյան Արաբիայում, Իտալիայում, Մոնտենեգրոյում և այլ երկրներում, նաև Հայաստանում:

Վերջին տասնամյակների ընթացքում, շնորհիվ տարբեր մայրցամաքներում գործարար ակտիվության աճի, նոր շուկաների ուսումնասիրության,

⁸ Տե՛ս Ամբողջական պահանջարկի կառուցվածքային տեղաշարժերի վերլուծությունն ու կանխատեսումը ՀՀ-ում: Մեծագրություն /տ.գ.թ., պրոֆ. Ի.Տ. Տիգրանյանի ընդհանուր խմբագրությամբ և ղեկավարությամբ/: Եր., «Տնտեսագետ», 2015, էջ 9–10:

⁹ Տե՛ս **Бабкин А.В.**, Специальные виды туризма. Ростов-на-Дону, „Феникс“, 2008, էջ 2–3, http://globalteka.ru/books/doc_details/11776. **Характеристики и особенности видов туризма**, էջ 7–16, <http://tourfaq.net/travel-business/klassifikaciya-osnovnyx-vidov-turizma/>, <http://www.camps.ru/association/turizm/61-vozmozhnosti-obrazovatelno-go-turizma.html>.

նոր գործընկերների և ռեսուրսների հայտնաբերման, լայն տարածում է ստացել զբոսաշրջության գործարար ուղղությունը, որը բազմաբնույթ համագումարների, ցուցահանդեսների, աշխատաժողովների մասնակցության միջոցով նպատակ ունի հաստատելու նոր գործարար հարաբերություններ: Այս համատեքստում աշխարհում առանձնանում է Բելգիայի մայրաքաղաք Բրյուսելը:

Ներկայում, ժամանակակից զբոսաշրջության բնագավառում, նկատվում է ոչ ավանդական տեսակներին անցման միտում, որոնցից մեծ պահանջարկ են վայելում արկածային, էկո- և ագրոզբոսաշրջության տեսակները:

Եթե նկատի ունենանք այն փաստը, որ 2016 թ. աշխարհի բնակչության (7 486 589 916 մարդ) 54%-ը (4 042 758 555 մարդ) կազմել է քաղաքային բնակչությունը,¹⁰ և 2016 թ. օգոստոսի դրությամբ աշխարհում կան 5 մլն բնակչությունը գերազանցող 50 խոշորագույն քաղաքներ, որոնցից 15-ը 10 մլն-ից ավելի բնակչություն ունեցող մեգապոլիսներ են¹¹, և, ըստ ՄԱԿ-ի կանխատեսումների, մինչև 2050 թ. քաղաքային բնակչությունը կավելանա ևս 2.5 մլրդ մարդով¹², ապա կարելի է ենթադրել, որ ՀՀ-ում արկածային, էկո- և ագրոզբոսաշրջությունը առաջիկայում քաղաքաբնակների համար կդառնա ոչ սովորական պայմաններում հանգստի և ժամանցի կազմակերպման հիանալի ձև, որը կնպաստի ՀՀ զբոսաշրջության ոլորտի մրցունակության բարձրացմանը:

Հայաստանն ընդհանուր առմամբ լեռնային երկիր է, տարբեր բարձրությունների բազմազանությունը տարածվում է չորս առանձին տարածաշրջանների վրա և հանգեցնում կլիմայի ու եզակիորեն հարուստ կենսատարածքների մեծ բազմազանության՝ համեմատած երկրի փոքր չափերի հետ: Հայաստանը գտնվում է երեք կենսաաշխարհագրական մարզերի (Կենտրոնական/Հյուսիսային Եվրոպա, Կենտրոնական Ասիա և Մերձավոր Արևելք/Հյուսիսային Աֆրիկա) միացման գոտում, նրա տարածքում միանում են երկու խոշոր կենսաաշխարհագրական գոտիներ՝ Արևելյան Անատոլիայի լեռնային տափաստանը և Կովկասյան խառն անտառները: Մեր երկիրը Կովկասյան էկոտարածաշրջանի կորիզի մի մասն է, որը Բնության համաշխարհային հիմնադրամի կողմից համարվել է «Գլոբալ 200 էկոտարածքներից» մեկը¹³:

ՀՀ-ն ունի պատմական, ճարտարապետական, գիտական, կրոնական և մշակութային նշանակության գրեթե բոլոր դարաշրջանները ներկայացնող հուշարձաններ, տարածքներ, որոնց մեծ մասը գտնվում է հիասքանչ բնության գրկում՝ բնակության վայրերից հեռու: Որպես զբոսաշրջային արժեքներ այստեղ կարող են առաջարկվել նաև առաջին քրիստոնյա երկիր լինելու հանգամանքը, հայկական գյուղի յուրօրինակությունը, հյուրընկալության համբավը, Եվրոպային մոտ գտնվելը, որոնք մեր երկրին՝ զբոսաշրջության բնագավառում, տալիս են կարևոր, սակայն դեռևս ոչ լիարժեք իրացված մրցակցային առավելություններ:

¹⁰ Տե՛ս Countrymeters.info/ru/World.

¹¹ Տե՛ս http://www.statdata.ru/largestcities_world

¹² Տե՛ս <http://www.unic.ru/press/po-dannym-oon-velichivaetsya-gorodskoe-narodonaselenie>

¹³ Տե՛ս Միավորված ազգերի կազմակերպության Չարգացման աջակցության ծրագիր [UNDAF – United Nations Development Assistance Framework], Երկիրը. Հայաստան, ծրագրի մեկնարկը՝ 2010 թ., ավարտը՝ 2017 թ., Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն, Կովկասի պահպանվող տարածքների հիմնադրամ:

Այսօր աշխարհում կարևորվում է էկոլոգիական զբոսաշրջությունը, որն ապահովում է մարդու և բնության միջև հավասարակշռությունը: Այս ուղղությունը ներկայացնում են բնության առավել մեկուսի և հանգիստ վայրերում կառուցված փոքր հյուրանոցային ցանցերը, հյուրատները:

Վերջին ժամանակներում՝ հատկապես երիտասարդ զբոսաշրջիկների շրջանում, մեծ ժողովրդականություն է վայելում զբոսաշրջության արկածային տեսակը: Արտակարգ իրավիճակների հարյուրհազարավոր սիրահարներ ճանապարհորդում են օդապարիկներով, ստորջրյա քարանձավներով, մագլցում են դժվարամատչելի լեռները, նավակներով ընթանում արագահոս գետերի հոսանքներով և այլն:

Ազրոզբոսաշրջությունը զբոսաշրջիկներին՝ հատկապես քաղաքաբնակներին, հնարավորություն է տալիս գիտելիքներ ձեռք բերելու կենցաղավարման վերաբերյալ, ծանոթանալու տեղի ավանդույթներին, ծեսերին, գյուղատնտեսական մթերքների արտադրությանը, ճաշակելու բնական, թարմ և առողջարար սննդամթերք, օգտվելու ոչ սովորական պայմաններում ժամանցի հնարավորությունից: Ազրոզբոսաշրջության զարգացմամբ կարելի է գյուղաբնակի տնտեսությունը կամ գյուղմթերքների շուկան վերածել յուրահատուկ զբաղմունքի:

Այսօր ՀՀ մի շարք մարզերի զբոսաշրջային հնարավորություններ ունեցող տարածքներում ստեղծվել են միջազգային չափանիշներին համապատասխանող հյուրատներ կամ, որ նույնն է՝ զբոսաշրջային տներ: ՀՀ-ն տարածաշրջանում կարող է հավակնել էկո- և ագրոտուրիզմի ամենաբարենպաստ գոտիներից մեկը դառնալուն: Կարելի է ասել, որ ՀՀ-ում ամբողջովին ձևավորվել է միջազգային դասակարգման մեջ ընդունված հյուրանոցների Բեդ ընդ Բրեքֆասթ (Bed and Breakfast՝ B&B) տեսակը, որը հաճախորդին տրամադրվող ծառայությունների ցանկը սահմանափակում է մահճակալով (bed) և նախաճաշով (breakfast): Օտարերկրյա զբոսաշրջիկները կարողանում են էլեկտրոնային կայքի միջոցով տեղեկություններ ստանալ բոլոր զբոսաշրջային գրավիչ ուղղությունների մասին: B&B հյուրանոցներում ծառայությունները մատուցում են ուղղակիորեն սեփականատերը կամ նրա ընտանիքի անդամները, որի շնորհիվ ապահովվում է զբոսաշրջիկների կողմից ներկայում մեծ պահանջարկ ունեցող ընտանեկան ջերմ մթնոլորտը:

Նշենք, որ ՀՀ-ում գործում է «Հայաստանի զբոսաշրջային տների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը:

Կարելի է փաստել, որ ՀՀ որոշ մարզերում ագրոտուրիզմն արդեն գրավիչ է դարձել: Իջևանում, Գորիսում, Տաթևում, Վայոց ձորի մարզում գյուղաբնակները արդիականացնում են իրենց կացարանները, կառուցում են հյուրատներ և մատուցում զբոսաշրջային ծառայություններ: Այս գործում ներգրավվողներին ՀՀ Կառավարությունը տալիս է որոշակի հարկային և վարկային արտոնություններ: Ըստ «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի՝ զբոսաշրջային տների միջոցով հյուրանոցային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձինք համարվում են արտոնագրային վճար վճարողներ, որոնց համար սահմանվում են եռամսյակային արտոնագրային վճարների չափեր՝ հաշվի առնելով գործունեության այդ տեսակի իրականացման վայրը:

Երևանում դա կազմում է 45000 դրամ, մարզկենտրոններում և այլ քաղաքներում՝ 30000 դրամ, հեռավոր և սահմանամերձ վայրերում՝ 15000 դրամ¹⁴։

Կայոց ծորի մարզում մեր կատարած ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 2016 թ. ամռանը Գոմք գյուղում գործող հյուրատուն են այցելել զբոսաշրջիկներ ԱՄՆ-ից, Թաիլանդից, Նիդեռլանդներից, Ռուսաստանից, որոնց հատկապես գրավել է տեղաբնակների պատրաստած բնական հումքով սնունդը, մի քանի օր բնության մեջ ներդաշնակ ապրելու հանգամանքը, հայ գյուղացու հետ պարզ ու անմիջական շփումը։

Նշենք, որ ՀՀ Կառավարությունը վերջին տարիներին, հաշվի առնելով համաշխարհային զբոսաշրջային արդյունաբերության զարգացման բարձր տեմպերը և ՀՀ զբոսաշրջության դրական զարգացումները, հիմք ընդունելով «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքը, Զբոսաշրջության զարգացման հայեցակարգը, յուրաքանչյուր տարվա համար մշակում և հաստատում է «Զբոսաշրջությանն աջակցության ծառայություններ» ծրագիրը։

Կարելի է ասել, որ ամենամյա ծրագրերի հիմնական նպատակներին՝ միջազգային շուկայում հայկական զբոսաշրջային արդյունքի մրցունակության բարձրացմանը, դեպի ՀՀ զբոսաշրջային հոսքերի շարունակական ավելացմանը (շուրջ 10%), համայնքներում զբոսաշրջության ներուժի բացահայտմանն ու զարգացմանը, ներքին զբոսաշրջության զարգացմանը, համաշխարհային զբոսաշրջային արդյունաբերությանը ՀՀ միասնացմանը, հայկական զբոսաշրջային արդյունքի բազմազանեցմանը, համապատասխան սեզոնի երկարաձգմանը, զբոսաշրջային ենթակառուցվածքների և մարդկային ռեսուրսների զարգացմանը, որպես զբոսաշրջության բարենպաստ և գրավիչ երկիր ընկալվելու նկարագրի ամրապնդմանը, դեպի ՀՀ մարզեր և համայնքներ զբոսաշրջության ապակենտրոնացմանը հասնելու համար իրականացվում են մի շարք միջոցառումներ։ Մասնավորապես՝ կազմակերպվում են ավանդական փառատոներ, օտարերկրյա լրագրողների համար ճանաչողական այցեր, միջազգային ճանաչված զբոսաշրջային ցուցահանդեսներին և տոնավաճառներին մասնակցություններ, տպագրվում են ՀՀ-ն զովագրող և բնութագրող նյութեր, կազմակերպվում է հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման և պարբերական գնահատման գործընթաց, պետական աջակցություն է ցուցաբերվում զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնի ստեղծմանը, հուշանվերների և տեղական այլ արտադրանքների վաճառքի համար օրինակելի տաղավարների ստեղծմանը¹⁵։ Զբոսաշրջային տների (B&B) զարգացմանը նպաստելու նպատակով հանրապետության մարզերում տեղի բնակիչների մասնակցությամբ կազմակերպվում են աշխատաժողովներ, պատրաստվում է զբոսաշրջային գրավչությունների մասին լուսանկարների համախումբ, ստեղծվում են ՀՀ-ի մասին հոլովակներ, և դրանք տարածվում են սոցիալական ցանցերի միջոցով, պետական աջակցություն է ցուցաբերվում «Հայ խոհարարական ավանդույթների զարգացման ու պահպանման» հասարակական կազմակերպությանը։

¹⁴ Տե՛ս <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=74501> «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենք, հավելված N 1, Արտոնագրային վճարի հաշվարկման համար որպես հիմք է ընդունվում զբոսաշրջային տան սենյակների թիվը։

¹⁵ Տե՛ս <http://www.arlis.am/documentview.aspx?docID>, https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2012/11/12_478.pdf, <http://www.mineconomy.am/uploads/20160107164340885.pdf> «Զբոսաշրջությանն աջակցության ծառայություններ». Ծրագիր (2011–2016 թթ.)։

Վերը նշված ծրագրային միջոցառումներն իրականացվում են ՀՀ պետական բյուջեի և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրների (մասնավոր հատված և շահագրգիռ այլ կողմեր) ֆինանսավորմամբ: Նշենք, որ 2011 թ. «Զբոսաշրջությանն աջակցության ծառայություններ» ծրագրով բյուջեից նախատեսվել է 50 մլն ՀՀ դրամ, իսկ արդեն 2016 թ. նույնանուն ծրագրով՝ 188.4 մլն ՀՀ դրամ:

Վերջին հինգ տարիներին համաշխարհային զբոսաշրջային այցելությունների միջին տարեկան աճը կազմել է շուրջ 4.5%, իսկ ՀՀ ներգնա միջազգային զբոսաշրջային այցելությունների միջին տարեկան աճը՝ շուրջ 9.0%¹⁶: Ըստ Միավորված ազգերի կազմակերպության Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (ՄԱԿ ԶՀԿ) վիճակագրական տվյալների՝ 2015 թ. համաշխարհային զբոսաշրջային այցելությունների թիվը հասել է 1 մլրդ 184 մլն-ի՝ 50 մլն-ով կամ 4.4%-ով ավելի, քան 2014 թ.: Վիճակագրական տվյալները փաստում են, որ 2015 թ. ՀՀ ներգնա միջազգային զբոսաշրջային այցելությունների թիվը շուրջ 1 միլիոն 192 հազար է՝ 1.0%-ով պակաս, քան 2014 թ.¹⁷: 2015 թ. ՀՀ-ում ներքին զբոսաշրջային այցելությունների թիվը կազմել է շուրջ 872 հազ.՝ 1.4%-ով ավելի, քան 2014 թ.՝ վերջին տարիներին արձանագրելով 14.5% միջին տարեկան աճ:

Ըստ ՀՀ ԱՎԾ հաշվետվությունների տվյալների և հետազոտությունների արդյունքում ձևավորված փորձագիտական գնահատումների՝ 2016 թ. հունվար-դեկտեմբերին Հայաստանի Հանրապետություն է ժամանել 1 259 657 զբոսաշրջիկ, կամ, 2015 թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ, ցուցանիշն աճել է 5.7%-ով¹⁸:

Այսպիսով՝ 2001-ից ի վեր, զբոսաշրջության ոլորտում վարվող նպատակային պետական քաղաքականության, ինչպես նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր հատվածի և բնակչության համագործակցության շնորհիվ, զբոսաշրջությունը ՀՀ-ում առաջընթաց է արձանագրել, որը կնպաստի այստեղ առկա առանցքային հիմնախնդիրներից մեկի՝ գյուղական և քաղաքային բնակչության աղքատության հաղթահարմանը:

Հայաստանը, ըստ վարչական բաժանման, ներառում է 10 մարզ և ք. Երևանը: ՀՀ-ում բնակչության կենսամակարդակն ըստ քաղաք-գյուղ բաշխվածության դիտարկելիս պարզվում է, որ 2015 թ. աղքատների մեծ մասը (61.5%) քաղաքաբնակներ են: 2008–2014 թթ. ՀՀ ԱՎԾ իրականացրած՝ տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքները փաստում են, որ 2014-ին ՀՀ-ում ընդհանուր աղքատության մակարդակը կազմել է 30.0%՝ նախաձգնաժամային 2008 թ. 27.6%-ի դիմաց

¹⁶ Տե՛ս <http://www.mineconomy.am/uploads/20160107164340885.pdf> «Զբոսաշրջությանն աջակցության ծառայություններ». 2016 թ. ծրագիր:

¹⁷ Տե՛ս http://www.armstat.am/file/article/sv_01_16a_421.pdf. Ըստ ՄԱԿ ԶՀԿ մեթոդաբանության (International Recommendations for Tourism Statistics 2008, Compilation Guide, UN WTO, Madrid, November 2010)՝ միջազգային զբոսաշրջիկ է համարվում ցանկացած անձ, ով հանգստանալու, բուժվելու, հարազատներին այցելելու, գործնական, կրոնական կամ այլ նպատակներով ճանապարհորդում է իր հիմնական բնակության վայրից մեկ այլ վայր ոչ պակաս, քան 24 ժամ և ոչ ավելի, քան անընդմեջ 1 տարի ժամանակով: Այսինքն՝ նրա հիմնական նպատակը ճանապարհորդելն է, այլ ոչ թե աշխատանքային գործունեությամբ զբաղվելը, որի դեպքում ուղևորության համար վճարումները կկատարվեին ժամանած վայրում աշխատանքային գործունեությունից ստացված ֆինանսական միջոցների հաշվին:

¹⁸ Տե՛ս http://armstat.am/file/article/sv_12_16a_421.pdf

աճելով 2.4%-ային կետով¹⁹: 2015 թ. աղքատության մակարդակը վիճակագրորեն չի փոփոխվել. նախորդ տարվա համեմատությամբ նվազել է միայն 0.2 տոկոսային կետով և կազմել 29.8%: 2015 թ. աղքատության աճը Երևանում կազմել է 25%` 2008 թ. 20.1%-ի փոխարեն, սակայն այլ քաղաքներում 2015 թ. կազմել է 34.4%` 2008 թ. 35.8%-ի փոխարեն, գյուղական բնակավայրերում 2015 թ. կազմել է 30.4%` 2008 թ. 27.5%-ի փոխարեն²⁰:

Այսպիսով` 2015 թ. աղքատության մակարդակի ցուցանիշները գերազանցել են 2008 թ. մակարդակը ինչպես երկրի մասշտաբով, այնպես էլ բոլոր մարզերում և ք. Երևանում, բացի Արագածոտնի (16.1%), Արարատի (27.3%), Կոտայքի (35.9%) և Վայոց ձորի (16.9%) մարզերից: Այդուհանդերձ, ավելի արագ տեմպերով այդ ցուցանիշի աճ է գրանցվել Տավուշում` 1.5 անգամ (35.3%), իսկ ք. Երևանում (25%), Արմավիրում (29.6%) և Սյունիքում (24.5%)` 1.2 անգամ²¹:

Ըստ էության, զբոսաշրջությունը կարող է ստանձնել տարածքային զարգացման անհամաչափությունը նվազեցնելու կարևոր գործառույթ` նպաստելով այն տարածքային միավորների առաջխաղացմանը, որոնք չունեն զարգացած արդյունաբերություն, սակայն հարուստ են ռեկրեացիոն ռեսուրսներով: Հեռավոր, սակավաբնակ և թույլ զարգացած տարածաշրջաններում զբոսաշրջությունը մասամբ չեզոքացնում է բնակչության արտահոսքի և գյուղական ավանդույթների քայքայման բացասական երևույթների հետևանքները: Ապահովում է նոր եկամուտներ, մեծացնում զբաղվածների թիվը և զարգացնում տարածաշրջանային ենթակառուցվածքները: Միևնույն ժամանակ, զբոսաշրջությունը կարող է ապահովել ՀՀ պահպանվող տարածքների համակարգի ֆինանսական կայունությունը` նպաստելով կենսաբազմազանության պահպանման հարցում ընդհանուր շահագրգռվածության և օժանդակության աճին:

Հայկական ավանդույթների, պատմության կրողը` հայ գյուղացին, կարող է դառնալ ՀՀ ագրոզբոսաշրջության գլխավոր առանցքը, ներուժ, որը Կառավարության հոգածության և ձեռնարկատիրական հմտություններով օժտված կառավարիչների միջոցով կարելի է զարգացնել և ներկայացնել աշխարհին:

Նշենք, որ ՀՀ-ին ժամանակակից զբոսաշրջության տեսակներից բնորոշ է կարոտախտի զբոսաշրջությունը, որը ենթադրում է զբոսաշրջիկների վերադարձն արմատներին: Սովորաբար, նրանք այցելում են իրենց հարազատ վայրեր` կարոտն առնելու, ոմանք էլ` պարզելու իրենց ծագման կամ հարազատ ժողովրդի պատմությունը:

Այսպիսով` ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ, չնայած համաշխարհային տնտեսության անկայունությանը, վերջին տարիներին զբոսաշրջային արդյունաբերությունն աշխարհում աճում է` դառնալով համաշխարհային տնտեսության հզոր խթան և առաջատար տեղ է զբաղեցնում ապրանքների ու ծառայությունների համաշխարհային արտահանման ծավալում:

¹⁹ Նշենք, որ, ըստ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2016» հրապարակման, որպես աղքատության մակարդակ ներկայացվում է աղքատության վերին մակարդակի ցուցանիշից ցածր սպառում ունեցող բնակչության մասնաբաժինը: 2014 թ. ՀՀ-ում աղքատության վերին ընդհանուր գիծը, մեկ չափահաս անձի հաշվով, մեկ ամսվա պարագայում կազմել է 40 264, իսկ 2015 թ.` 41 698 ՀՀ դրամ:

²⁰ Տե՛ս http://www.armstat.am/file/article/poverty_2016a_2.pdf

²¹ Տե՛ս http://www.armstat.am/file/article/poverty_2016a_2.pdf, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2016, մաս 1. Աղքատության պատկերը Հայաստանում 2008–2015 թթ., Եր., 2015, ՀՀ ԱԿԾ, էջ 35-45:

Ջրոսաշրջային այցելությունների թվին զուգահեռ աճում են նաև դրանցից ստացվող եկամուտները՝ գերազանցելով այլ ապրանքների և ծառայությունների արտահանումից առաջացող եկամուտները: ՀՀ-ում ներգնա զբոսաշրջությունը արտահանման երկրորդ խոշորագույն հոդվածն է հանքահումքային արտադրանքի և մետաղներից հետո և ապահովում է ծառայությունների արտահանման կեսից ավելին:

Համեմատության համար նշենք, որ ամեն տարի Ֆրանսիա է այցելում ավելի քան 90 մլն օտարերկրյա զբոսաշրջիկ: Այս ցուցանիշով Ֆրանսիային հաջորդում են ԱՄՆ-ն, Իսպանիան, Չինաստանը և Իտալիան: Իհարկե, նշված երկրները տնտեսապես զարգացած և զարգացող խոշոր երկրներ են, սակայն փոքր բաց տնտեսությունները նույնպես հաջողություններ ունեն այս բնագավառում: Օրինակ՝ Հայաստանին բնակչությամբ կամ տարածքային առումով նման երկրներից հաջողություններ են արձանագրում Մակեդոնիան, Լիտվան, Լատվիան, Բելգիան, Իսրայելը, որտեղ բուռն կերպով զարգանում է բժշկական զբոսաշրջությունը: Դրան նպաստում են միջազգային չափանիշներին համապատասխան ժամանակակից ախտորոշիչ և բուժական կենտրոնները, բարձր որակավորում ունեցող բժիշկները, սպասարկումը, ձկուն գները և, ինչու չէ, նաև հավատը այդ երկրի՝ որպես սրբավայրի հանդեպ:

Քանի որ զբոսաշրջությունից ստացված արդյունքներն արտացոլվում են երկրների տնտեսական կյանքում, ուստի ազգային տնտեսությունների վրա զբոսաշրջության ազդեցությունը գնահատելիս կարևորվում են դրա արտադրական, ներդրումային, բնակչության զբաղվածության մեծացման, եկամտի ստեղծման, վճարային հաշվեկշռի հարթեցման տնտեսական գործառնությունները:

Ըստ ճանապարհորդության և զբոսաշրջության համաշխարհային խորհրդի (WTTC) 2016 թ. զեկույցի՝ 2015 թ. զբոսաշրջության մասնաբաժինը (ուղղակի ներդրումը) ՀՀ ՀՆԱ-ում կազմել է 3.8% կամ 183.4 մլրդ դրամ²²: Այս ցուցանիշով, զեկույցում ներկայացված 184 երկրների շարքում, ՀՀ-ն զբաղեցնում է 88-րդ հորիզոնականը: Ըստ կանխատեսումների՝ զբոսաշրջության մասնաբաժինը ՀՀ ՀՆԱ-ում 2016 թ., 2015 թ. համեմատությամբ, կաճի 4%-ով՝ կազմելով 190.7 մլրդ դրամ: Նշենք, որ 2014 թ. այն կազմել է ՀՀ ՀՆԱ 3.6%-ը կամ 163.1 մլրդ դրամ²³: Ջրոսաշրջության ուղղակի ներդրումը ՀՆԱ-ում ներառում է զբոսաշրջության ոլորտում իրականացված ուղղակի ծախսերը, մասնավորապես՝ երկրում զբոսաշրջիկների ծախսած գումարները, Կառավարության իրականացրած մշակութային, հանգստի և մյուս ծախսերը, որոնք ուղղակիորեն կապված են այցելուներ ներգրավելու հետ և այլն:

Ջրոսաշրջության ընդհանուր ներդրումը ՀՀ ՀՆԱ-ում 2015 թ. կազմել է 660.9 մլրդ դրամ կամ ՀՆԱ 13.7%-ը: Ըստ WTTC զեկույցի կանխատեսումների՝ դա 2016 թ. կհասնի 685.6 մլրդ-ի (ՀՆԱ 13.7%-ը): Այս ցուցանիշն արտացոլում է ոլորտի ազդեցությունը տնտեսության վրա՝ ավելի լայն տեսանկյունից (օդանավերի գնում, հյուրանոցների կառուցում, մարքեթինգային ծախսեր և այլն):

²² Տե՛ս <http://tbcsa.travel/2016/06/21/wttc-economic-impact-study-2016-summary/>. The Economic Impact Of Travel & Tourism: 2016 Annual Update-Summary. Նշենք, որ 2015 թ. Թուրքիայում զբոսաշրջությունն ապահովել է ՀՆԱ 5%-ը (56-րդ տեղ), Ադրբեջանում՝ 2.8%-ը (116-րդ), Իրանում՝ 2.5%-ը (133-րդ), իսկ Ռուսաստանում՝ 1.5%-ը (173-րդ):

²³ Տե՛ս <http://www.banks.am/am/news/newsfeed/11939/>

Զբոսաշրջության`բնակչության զբաղվածության մեծացմանը նպաստող գործառույթը կապված է այն հանգամանքի հետ, որ զբոսաշրջային արդյունքներն ու ծառայությունները ենթադրում են մարդկային գործոնի միջամտություն, ինչն էլ պայմանավորում է զբոսաշրջային ոլորտի աշխատատարությունը: Նույնիսկ նոր տեխնոլոգիաների ներդրումը չի կարող ամբողջովին փոխարինել կենդանի շփմանը: 2015 թ. ՀՀ-ում զբոսաշրջության ոլորտում ներգրավված է եղել շուրջ 40 հազ. մարդ`երկրի ընդհանուր զբաղվածների մոտ 3.3%-ը:

Զբոսաշրջության եկամտի ստեղծման գործառույթը հիմնականում իրականացվում է զբոսաշրջային գործունեությունից ստացվող հարկային մուտքերի և արտահանման ազդեցության միջոցով: Ըստ այդմ` 2015 թ. ՀՀ-ում ներգնա զբոսաշրջությունից եկամուտները կազմել են 437.5 մլրդ դրամ` ընդհանուր արտահանման (ծառայությունների և ապրանքների արտահանումը միասին) 29.6%-ը:

Այսպիսով` զբոսաշրջությունն ազդում է նաև երկրի վճարային հաշվեկշռի վրա` կատարելով դրա բարելավման գործառույթ: Արտագնա և ներգնա զբոսաշրջության ցուցանիշների համադրումը հնարավորություն է տալիս գնահատելու երկրի վճարային հաշվեկշռի վրա զբոսաշրջության ազդեցությունը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ-ում զբոսաշրջությանը վերաբերող վիճակագրական տվյալները ոլորտն ամբողջությամբ չեն ներկայացնում: Սակավաթիվ են նաև այս բնագավառին վերաբերող հետազոտություններն ու վերլուծությունները, որոնք կարող են նպաստել պետական նպատակային քաղաքականության կատարելագործմանը` արդյունավետ որոշումներ կայացնելու առումով: Ուստի, կարծում ենք` հիմնավորված է զբոսաշրջության կառավարման առանձին գերատեսչական մարմնի ստեղծումը:

Օգտագործված գրականություն

1. ՀՀ օրենքը «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին», 17.12.2003:
2. Զբոսաշրջության զարգացման հայեցակարգ, 2008:
3. «Զբոսաշրջությանն աջակցության ծառայություններ» ծրագիր (2011–2016 թթ.):
4. ՀՀ օրենքը «Արտոնագրային վճարների մասին», 22.12.2010:
5. Ամբողջական պահանջարկի կառուցվածքային տեղաշարժերի վերլուծությունն ու կանխատեսումը ՀՀ-ում: Մեմագրություն /տ.գ.թ., պրոֆ. Ի.Տ. Տիգրանյանի ընդհ. խմբ. և ղեկ./, Եր., «Տնտեսագետ», 2015:
6. Հայաստանի Հանրապետության 2014–2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, 27.03.2014:
7. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, ՀՀ ԱՎԾ, 2016:
8. Бабкин А.В., Специальные виды туризма, Ростов-на-Дону, “Феникс”, 2008.
9. <http://www.arlis.am>
10. <http://www.mfe.am>
11. <http://www.armstat.am>
12. <http://www.gov.am>
13. <http://www.mineconomy.am>

14. http://globalteka.ru/books/doc_details/11776
15. <http://tourfaq.net/travel-business/klassifikaciya-osnovnyx-vidov-turizma/>
16. <http://www.camps.ru/association/turizm/61-vozmozhnosti-obrazovatel'nogo-turizma.html>
17. <http://unohrlls.org/meetings-conferences-and-special-events/landlocked-developing-countries-facts-and-figures-unctad-2006/>
18. <http://www.ereport.ru/stat.php.razdel=country&count>.
19. <http://www.lldc2conference.org/custom-content/uploads/2014/09/Report-en.pdf>
20. Countrymeters.info/ru/World
21. http://www.statdata.ru/largestcities_world
22. <http://www.unic.ru/press/po-dannym-oon-uvelichivaetsya-gorodskoe-narodonaselenie>
23. <http://tbcsa.travel/2016/06/21/wttc-economic-impact-study-2016-summary/>. The Economic Impact Of Travel & Tourism: 2016 Annual Update-Summary
24. <http://www.banks.am/am>

ВАРСИК ТИГРАНЯН

Ассистент кафедры Макроэкономики АГЭУ,
кандидат экономических наук

Возможности развития туризма в Республике Армения. – Исследования показывают, что в РА наиболее важной задачей развития отрасли туризма является диверсификация видов туризма. Результаты показывают, что если использовать туристический потенциал РА и развивать новые туристические направления, которые пользуются большим спросом на международном рынке, то можно будет создать разнообразный туристический пакет, который позволит в долгосрочной перспективе достичь рекордного роста въездного туризма в РА. В то же время это обеспечит такие экономические функции туризма, как: производственную функцию, получение дохода, занятость населения, инвестиционную функцию и улучшение платёжного баланса.

Ключевые слова: *развивающиеся страны, природные и антропогенные ресурсы, инвестиции туризма, туристический переворот, туристические направления, туристические ценности, агротуризм, экотуризм, гостевые дома, территориальное развитие, целевая политика.*

JEL: L8, L83, L88

VARSIK TIGRANYAN

Assistant at the Chair of Macroeconomics at ASUE,
PhD in Economics

Development Opportunities of Tourism in the Republic of Armenia. – Research shows that the most important task of the development of tourism industry in the RA is the diversification of types of tourism. The results show that if we use the tourism potential of the Republic of Armenia and develop new touristic directions, which are in great demand in the international market, it will be possible to create a diverse touristic package, which will allow in the long run to achieve record growth of inbound tourism in Armenia. At the same time it will provide economic functions of tourism: production function, getting of income, employment, investment function and improvement of balance of payments.

Key words: *developing countries, natural and anthropogenic resources, tourism investments, tourism revolution, tourism destinations, tourism values, agrotourism, ecotourism, guest houses, territorial development, targeted policy.*

JEL: L8, L83, L88